ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 սեպտեմբերի 2024 թվականի N 1420-Ա

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 2023 թվականի հունիսի 15-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և Սուրբ Աթոռի Պետական քարտուղարության միջև կնքված Մտադրությունների մասին հուշագիրը, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63.1-ին հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Կենտրոն Մարշալ Բաղրամյան պողոտա 12 հասցեում գտնվող անշարժ գույքը (այսուհետ՝ անշարժ գույք) (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 10062024-01-0302),

որը բաղկացած է 0.217922 հեկտար հողամասից, 800.2 քառ. մ վարչական շենքից, 82.5 քառ. մ ավտոտնակից, 38.9 քառ. մ ավտոտնակից, 33.5 քառ. մ մետաղական շինությունից, 19.7 քառ. մ մետաղական շինությունից, 70.9 քառ. մ օժանդակ շինությունից, 70.4 քառ. մ և 154.88 խոր. մ պարսպից, 36.9 քառ. մ ծածկից, 45.3 քառ. մ ծածկից, 31.5 քառ. մ ծածկից, 84.8 քառ. մ ծածկից՝ ուղղակի ձևով 99 տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրել Հայաստանում Սուրբ Աթոռի առաքելական նվիրակությանը:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանում Սուրբ Աթոռի առաքելական նվիրակ արքեպիսկոպոսի հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) կնքումը՝ սահմանելով, որ՝

1) վարձակալությամբ տրամադրվող անշարժ գույքի տարեկան վարձավճարը կազմում է 1 ամերիկյան դոլարին համարժեք Հայաստանի Հանրապետության դրամ.

2) վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

3) պայմանագրի նոտարական վավերացման և դրանից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ